



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ**

**«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

« 01 » 11 2016թ.

**Հաստատում եմ՝**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ Ս. Անանյան

ՍՅ-ԳԲԽ-45/16 բողոքը քննող

հանձնաժողովին

**Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11828-16 գրությամբ ներկայացված «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01244541) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.04.2016թ. թիվ 1/73-1/11828-16 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝



առաջարկելով ուսումնասիրել «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերջինիս Ցուցակում ներառելու համար:

## **2. «Սամնարպրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 12.04.2016թ. N 01/04.2/1467-16 գրությամբ դիմել է «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին:

«Սամնարպրինտ» ՍՊԸ-ն 24.05.2016թ., 06.06.2016թ. և 21.06.2016թ. Կենտրոնին ներկայացված համապատասխանաբար թիվ 09/5662-16, թիվ 09/5971-16 և թիվ 09/6444-16 գրություններով հայտնել է, որ Ընկերությունը «Գործիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ: Ընթացակարգի հայտերի բացման նիստը կայացել է 08.12.2015թ. ժամը 10:22-ին, սակայն Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է: Ընկերության պնդմամբ վերջինս հայտը ներկայացնելու՝ այն է 08.12.2015թ. ժամը 10:22-ի դրությամբ չի ունեցել ժամկետանց պարտքեր հարկային վճարների գծով: Տվյալ օրվա դրությամբ ընկերության հարկային պարտավորություններն առաջացել են 12:44-12:52 ընկած ժամանակահատվածում՝ նախորդող տարիների հաշվետվությունների ճշգրտման արդյունքում՝ Մաշտոցի ՏՀՏ-ի կողմից ստացած թիվ 800/2015 գրության հիման վրա:

«Սամնարպրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 26.05.2016թ. ժամը 15:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-45/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը: Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման նիստի պահի դրությամբ Ընկերությունը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:



### **3. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը**

«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.04.2016թ. թիվ 30 գրությամբ հայտնել է, որ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Սամնարարինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

Պատվիրատուն 11.04.2016թ. թիվ 30 գրությամբ ներկայացրել է «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 26.05.2016թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-45/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

### **4. ՍՑ-ԳԲԽ-45/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11828-16 գրությամբ ներկայացված «Սամնարարինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Սամնարարինտ» ՍՊԸ-ն **08.12.2015թ.** հայտ է ներկայացրել:



2. «Սամնարարինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 2 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.12.2015թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի «բ» պարբերությամբ որոշել է 1-9 չափաբաժինների մասով «Սամնարարինտ» ՍՊԸ-ին ճանաչել 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

4. «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 30.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Սամնարարինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 02.04.2016թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Սամնարարինտ» ՍՊԸ-ն **հայտ ներկայացնելու՝ 08.12.2015թ. դրությամբ ունեցել է 231.793 ՀՀ դրամ** ժամկետանց հարկային պարտավորություն:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.12.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «Սամնարարինտ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. Կենտրոնը 15.07.2016թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված թիվ 01/04.2/2734-16 գրությամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Սամնարարինտ» ՍՊԸ-ն 08.12.2015թ. դրությամբ ունեցել է ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, թե ոչ:

8. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 01.08.2016թ. թիվ 6-1/22950-16 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության տեղեկատվական բազայում 21.07.2016թ. դրությամբ «Սամնարարինտ» ՍՊԸ-ն 08.12.2015թ.-ին ունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:



**4. ՍՑ-ԳԲԽ-45/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը**

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 11.04.2016թ. թիվ 30 գրությունը և կից փաստաթղթերը, «Սամնարպրինտ» ՍՊԸ- 24.05.2016թ., 06.06.2016թ. և 21.06.2016թ. համապատասխանաբար, թիվ 09/5662-16, թիվ 09/5971-16 և թիվ 09/6444-16 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է, որ **գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:**

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, **եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ



հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է՝ **6 ամիս ժամկետով**, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան



որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է **կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ** կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

«Սամնարպրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված՝ Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցմամբ, խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Սամնարպրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Սամնարպրինտ» ՍՊԸ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա **(08.12.2015թ.)** դրությամբ ունեցել է 231.793 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոհիշյալ փաստը հաստատվել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 01.08.2016թ. Կենտրոնին ուղղված թիվ 6-1/22950-16 գրությամբ, որի համաձայն 21.07.2016թ. դրությամբ «Սամնարպրինտ» ՍՊԸ-ն 08.12.2015թ. ունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

Այսպիսով՝ ՀՀ ֆինանսների նախարարության 02.04.2016թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սամնարպրինտ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցության հայտի N 2 հավելվածով ներկայացված հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը և Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի տեսանկյունից հանդիսանում է կեղծ տվյալ:



Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:**

Այսպիսով, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար **պարտադիր և միաժամանակյա առկա հիմքերն են՝**

- նույն կետի «բ» ենթակետերով նախատեսված և մասնակցին վերագրվող խախտման առկայությունը,

- խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մասնակցի կողմից գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու հանգամանքը:

Հետևաբար, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և **Ընկերությանը վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ**, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 25.07.2016թ. Կենտրոնին ուղղված թիվ 1/73-3/19014-16 գրությամբ ներկայացրել է «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 15.07.2016թ. թիվ 79 գրությունը, որի համաձայն՝ «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված «ԱԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-16/11» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սամնարպրինտ» ՍՊԸ-ն 04.06.2016թ. ներկայացրել է հայտ:

Այսպիսով՝ Կենտրոնը արձանագրում է, որ «Սամնարպրինտ» ՍՊԸ-ի վերաբերյալ միաժամանակ առկա են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ Ցուցակում ներառելու երկու հիմքերը, քանի որ Ընկերությունը **08.12.2015թ.** մասնակցելով «ՍՄԳԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/38» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, ներկայացրել է կեղծ տվյալ՝ թույլ տալով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի խախտում և **04.06.2016թ.** կրկին հայտ է ներկայացրել «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի



կողմից կազմակերպված «ԱԲԿ-ՇՀԱՇՁԲ-15/3-16/11» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին:


Հիմք ընդունելով վերագրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության կողմից խախտվել են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, այն է՝ **հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է կեղծ տվյալ, որը հիմք է «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու համար:**

Միևնույն ժամանակ Կենտրոնը արձանագրում է, որ սույն եզրակացության ներկայացման օրվա դրությամբ, Ընկերության կողմից չեն վերականգնվել Կենտրոնի և «Սամնարպրինտ» ՍՊԸ-ի միջև 14.04.2015թ. կնքված «ՇՀԱՇՁԲ-15/3-62» ծածկագրով շրջանակային համաձայնագրին համապատասխան հաշվարկված տուժանքի գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 11.04.2016թ. թիվ 1/73-1/11828-16 գրությամբ ներկայացված «Սամնարպրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01244541) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված վեց ամիս ժամկետով:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների վերապատրաստման և իրավախորհրդատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-45/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝



Լ. Եղիազարյան